Արմեն Սմբատյան

ԿԸՀ քարտուղար

SmbatyanA@elections.am
+37410 543506

Ծնվել է **1977**թ. սեպտեմբերի 26-ին Եղեգնաձորում:

Կրթություն

1994թ. ավարտել է Եղեգնաձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1994-1999թթ.՝ Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտ:

2001-2003թթ.՝ ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրա:

2004-2007թթ.՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական բաժին, իրավագիտության մագիստրոս:

2015-ից՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ:

Աշխատանքային գործունեություն

1998-1999թթ աշխատել է ՀՀ բանկային համակարգում:

1999-2001թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում:

2002-2007թթ. աշխատել է շինարարական ընկերության փոխտնօրեն:

2004թ.՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գյուղական համայնքների զարգացման միավորում-գյուղական համայնքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, մշակման և համայնքների անձնագրավորման փորձագետ:

2006-2007թթ. «Ազգային տարի» ՊՈԱԿ-ում զբաղեցրել է աշխատակազմի ղեկավար-գլխավոր մենեջերի պաշտոնը, եղել է Ֆրանսիայում Հայաստանի տարին ազդարարող «Շառլ Ազնավուր և ընկերներ» համերգի գլխավոր մենեջերը:

2007-2010թթ. աշխատել է ՀՀ աշխատանքի պետական տեսչության Երևանի տարածքային կենտրոնի պետի տեղակալ, 2010- 2011թթ՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետի տեղակալ:

2010-2011թթ.՝ ՀՀ աշխատանաքի պետական տեսչության աշխատողների արհեստակցական միության նախագահ:

2011թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ընտրվել հանձնաժողովի քարտուղար:

2016թ. հոկտեմբերի 6-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, հոկտեմբերի 11-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ընտրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար:

2022թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, հոկտեմբերի 12-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ընտրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար:

Դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Ամուսանացած է, ունի երեք որդի: